ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Պայմանագրի համարը, ամսաթիվ ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/33 «05» 09 2018թ.

2. Պայմանագրի կողմը «Ապարանի ԷՑՇ» ԲԲԸ
(անվանումը)

3. Պայմանագրի առարկան «Էրեբունի 220 ԿՎ ՕԳ-ի առմուտներ դեպի ԵԿ 220/110/10 ԿՎ «ԵՐՋԷԿ» աշխատանքներ

4. Պայմանագրի գումարը 61.850.000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ

5. Պայմանագրի գործողության ժամկետը «Էրեբունի 220 ԿՎ ՕԳ-ի անջատման օրվանից 15 աշխատանքային օր

6. Պայմանագրի երաշխիքային ժամկետը 365 օր

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄՆԵՐ

N	Պաշտոնը	Անուն Ազգանուն	Ստորագրություն
1.	Տեխնիկական տնօրեն	Լ. Ադամյան	
2.	Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ	Վ. Մարտիրոսյան	
3.	Իրավապայմանագրային բաժնի պետ	Կ. Մելքոնյան	
4.	Գլխավոր հաշվապահ	Գ. Մուրադյան	
5.	Մատակարարման բաժնի պետի ժ/պ	Կ. Սերոբյան	

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/33

ք. Երևան «05» մայիսի 2018թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար Ա. Հովակիմյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ապարանի ԷՑԾ» բաց բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Գ. Ասլանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու) մյուս կողմից, կնքեցին Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշիվ-գնման ժամանակացույցով նախատեսված ***«Երեբունի 220 ԿՎ ՕԳ-ի առմուտներ դեպի ԵԿ 220/110/10 ԿՎ «ԵՐՋԷԿ» Աշխատանքները*** (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

3.1.2 Կապալառուի կողմից Պայմանագրում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը,

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, Պայմանագրի N 1 Հավելվածով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը,

3.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է Պայմանագրով նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են Պայմանագրով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել *երաշխիքային ժամկետում,*

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով,

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս աջակցել Կապալառուին Պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով,

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ Պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին,

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 Աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք,

3.2.4 Պայմանագրով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը,

3.3.2 Պատվիրատուի կողմից Պայմանագրում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքի առնվազն **75 տոկոսը** կատարել անձամբ, (առավելագույն 25 տոկոսի կատարմանը կարող է մասնակից դարձնել ենթակապալառուների), Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան,

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում Պայմանագրի պայմաններին,

3.4.3 Ապահովել շինմոնտաժային Աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը,

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին,

3.4.5 Պայմանագրում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը,

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը,

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը,

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին *բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել* կատարված *Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին,* Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները,

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները,

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված Աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Աշխատանքի կատարման համար նախատեսված օրը Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող Աշխատանքային օրվանից հաշված **20 Աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված Աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե Պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված Աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված Աշխատանքը համարվում է ընդունված և Պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող

Աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի Աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները *նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը* կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ Աշխատանքը և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ Աշխատանքը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Աշխատանքն ընդունող հանձնաժողովի ակտը ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է կատարված Աշխատանքների համապատասխանությունը Պայմանագրի պահանջներին և, եթե կատարված Աշխատանքը՝

ա. համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

2) մինչև սույն կետով նախատեսված՝ Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում Պայմանագրի ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել Պայմանագրի ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 61.850.000 (վաթսունմեկ միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որից ԱԱՀ-ն կազմում է 10.308.333 (տասը միլիոն երեք հարյուր ութ հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի Աշխատանքների, փուլերի և ծավալների՝ Պայմանագրով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության և հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ժամկետներում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ Աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված Աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների Աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն Պայմանագրով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձել տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4. կետով նշված կարգով Պայմանագիրը լուծելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուից գանձել տուգանք՝ Պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների Աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված

խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Եթե Պայմանագիրն (**առավելագույնը 25 տոկոսը**) իրականացվում է ենթակապալի Պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) Պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի Պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ Աշխատանքային օրվա ընթացքում:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են *բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը ենթակա են* քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.11 Սույն Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Սույն Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՊԱԼԱՌՈՒ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Ապարանի ԷՑԾ» ԲԲԸ	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Քուչակ	Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» Աշտարակի մ/ճ	«Հայբիզնեսբանկ» Մալաթիա մ/ճ
Հ/Հ 11500772041600	Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 05200554	ՀՎՀՀ 01522459
Գ.Ավյանյան	Ա. Հովակիմյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 1
«05» 09 2018թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/33 ծածկագրով Պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ «ԷՐԵԲՈՒՆԻ» 220ԿՎ ՕԳ-Ի ԱՌՄՈՒՏՆԵՐ ԴԵՊԻ ԵԿ 220/110/10ԿՎ «ԵՐՋԷԿ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Աշխատանքի անվանում	Չափման միավոր	Քանակ	Միավոր Գին ՀՀ դրամ	Ընդհանուր Գին ՀՀ դրամ	Ծանոթություն
	1. Շին-մոնտաժային Աշխատանքներ					
1	32,797 տ քաշով, խարսխային մետաղական հենարանի ապամոնտաժում, նորմալ պայմաններում	հատ տ	1 31,2	211,855	6,609,876	30% մաշվածքով օգտագործել տեղում
2	2,7 խ.մ ծավալով ե/բ հիմքերի ապամոնտաժում 220ԿՎ ՕԳ-ի մետաղական խարսխային հենարանների տակ	հատ խ.մ	4 10,8	250,000	1,000,000	3 հատը օգտագործել տեղում
3	Մեկ հատ C-70 շանթապաշտպան ճոպանի ապամոնտաժում մինչև 1կմ երկարության խարսխային թռիչքում	կմ (1ճոպան)	0.155	500,000	77,500	օգտագործել տեղում
4	220ԿՎ ՕԳ-ի 3 հատ AC-400/51 հաղորդալարի ապամոնտաժում մինչև 1կմ խարսխային թռիչքում, նորմալ պայմաններում	կմ (3h լար)	0.155	3,500,000	542,500	օգտագործել տեղում
5	V կարգի բնահողի քանդում 0,65 խ.մ ծավալի խոփով էքսկավատորով, հիմքերի տեղադրման համար	խ.մ	116	7,000	812,000	
6	0,1 մ հաստությամբ շերտով խճաքարե նախապատրաստվածք հիմքերի տակ	խ.մ	3	6,193.6	18,580.8	
7	2,7 խ.մ ծավալով ե/բ հիմքերի մոնտաժում 220ԿՎ ՕԳ-ի մետաղական խարսխային հենարանի տակ	հատ խ.մ	4 10,8	300,000	1,200,000	
8	IV կարգի բնահողով հիմքերի փոսորակների ետլիցք, C-130 բուլդոզերով	խ.մ	100	950	95,000	
9	ՕԳ-ի N66,67 և 67ա 32,8 տ քաշով, խարսխային մետաղական հենարանների կոնստրուկցիաների նորոգում	հատ տ	3 27,0	600,000	1,800,000	

10	Պակասող Մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում N66,67 և 67ա հենարանների նորոգման համար (75x78x8 անկյունակներ)	տ	0.3	72,000	201,600	
11	31 տն քաշով 19,3 մ բարձրությամբ 330կվ У39-М+5 մետաղական խարսխային հենարանի ներկում լաքով 2 անգամ /ալյումինե փոշիով/	տ	31.3	45,000	1,408,500	
12	32,8 տ քաշով, խարսխային մետաղական հենարանի մոնտաժում, նորմալ պայմաններում	հատ տ	1 32.797	250,000	8,199,250	
13	220կՎ ՕԳ-ի 6 հատ АС-500/64 հաղորդալարի մոնտաժում մինչև 1կմ խարսխային թռիչքում, նորմալ պայմաններում	կմ (6h լար)	0.38	4,000,000	1,520,000	
14	Մեկ հատ С-70 շանթապաշտպան ճոպանի մոնտաժում մինչև 1կմ երկարության խարսխային թռիչքում	կմ (1ճոպան)	0.38	600,000	228,000	
15	V կարգի բնահողի քանդում հենարանների հողակցման համար 0.4x0,5 մ խրամուղում 0,3 խ.մ ծավալի խոփով էքսկավատորով	խ.մ	32	4,000	128,000	
16	Հենարանի ճառագայթային հողակցման կոնտուրի մոնտաժում Φ12 մմ կլոր պողպատով	մ	160	2,500	400,000	
17	IV կարգի բնահողի ետլիցք խրամուղում С-130 բուլդոզերով	խ.մ	32	800	25,600	
18	0,1 մ հաստությամբ շերտով խճաքարով հենարանի շրջակայքի հարթեցում և բարեկարգում	ք.մ	100	2,200	220,000	
19	Գծային արմատուրայի բեռնում, բեռնաթափում և տեղափոխում ճանապարհով 10 կմ	տ	9.75	30,000	292,500	
20	Հաղորդալարի, կոճերի հետ միասին բեռնում, բեռնաթափում և տեղափոխում ճանապարհով 10 կմ	տ	5.03	30,000	150,900	
21	С-70 շանթապաշտպան ճոպանիկոճերի հետ միասին բեռնում, բեռնաթափում և տեղափոխում ճանապարհով 10 կմ	տ	0.51	26,000	13,260	
22	Մետաղական հենարանի կոնստրուկցիաների բեռնում, տեղափոխում ճանապարհով 10 կմ և բեռնաթափում, N66,67 և 67ա հենարանների նորոգման համար (75x78x8 անկյունակներ)	տ	0.5	30,000	15,000	

23	Հողակցման մետաղի բեռնում, բեռնաթափում և տեղափոխում ճանապարհով 10 կմ	տ	0.15	30,000	4,500	
24	Խճաքարի բեռնում և տեղափոխում ճանապարհով 10 կմ	տ	25	3,000	75,000	
25	Ավելցուկ բնահողի բեռնում և տեղափոխում ճանապարհով 10 կմ	խ.մ	16	2,500	40,000	
2. Նյութեր շինարարության համար						
1	32.797տ քաշով, խարսխային մետաղական հենարան (1,597տ)	տ հատ	31,2 1	500,000	798,500	31,2տ-տեղում օգտագործվող
2	2.7խմ ծավալով ե/բ հիմք	հատ խ.մ	4 10,8	-	-	տեղում օգտագործվող
3	Հաղորդալար AC 500/64 նոր (3,480)	տ	4.35	1,800,000	6,264,000	0,87տ - տեղում օգտագործվող
4	C-70 շանթապաշտպան ճոպան նոր (240)	մ	400	700	68,000	160մ-տեղում օգտագործվող
5	Մեկուսիչների ձգող շարան կարգավորիչ միջանկյալ օղակով	շարան	36	500,000	18,000,000	
6	C-70 շանթապաշտպան ճոպանի ձգող շարան	շարան	6	35,000	210,000	
7	AC-500/64 հաղորդալարի տատանման մարիչ	հատ	24	8,000	192,000	
8	C-70 ճոպանի տատանման մարիչ	հատ	4	4,000	16,000	
9	AC-500/64 հաղորդալարի մերակների միացման սեղմակ	հատ	36	8,000	288,000	
10	Մետաղական կոնստրուկցիաներ հենարանների նորոգման համար	տ	0.3	672,000	201,600	
11	Մետաղական իրեր /հեղյուս, մանեկ/	տ	0.2	970,000	194,000	
12	Հողանցման մետաղ Φ12մմ	տ	0.15	400,000	60,000	
13	Խճաքար	խ.մ	12	6,000	72,000	
3. Վերադարձվող նյութեր						
1	32.797տ քաշով, խարսխային մետաղական հենարան	տ	31,2	-	-	30% մաշվածքով օգտագործել տեղում
2	Հաղորդալար	տ	0,87	-	-	օգտագործվում է տեղում
3	C-70 շանթապաշտպան ճոպան	մ	160	-	-	օգտագործվում է տեղում
4	2.7խմ ծավալով ե/բ հիմք	հատ խ.մ	4 10,8	-	-	օգտագործվում է տեղում

Այլ Պայմաններ	
Աշխատանքի կատարման ժամկետը	«Էրեբունի» 220կՎ ՕԳ-ի անջատման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում
Աշխատանքի կատարման վայրը	ք. Երևան Արին-Բերդի փող. 3-րդ նրբանցք

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Ապարանի ԷՑՇ» ԲԲԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Քուչակ
«Հայբիզնեսբանկ» Աշտարակի մ/ճ
Հ/Հ 11500772041600
ՀՎՀՀ 05200554

Գ. Անյանյան
(ստորագրություն)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Ա. Հովակիմյան
(ստորագրություն)

Հավելված 2
«05» 09 2018թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/33 ծածկագրով Պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Երկկողմանի ստորագրված հաշիվ-ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, հանձնման-ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում:

ԿԱՊԱԼԱՌՈՒ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Ապարանի ԷՑՇ» ԲԲԸ	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Քուչակ	Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» Աշտարակի մ/ճ	«Հայբիզնեսբանկ» Մալաթիա մ/ճ
Հ/Հ 11500772041600	Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 05200554	ՀՎՀՀ 01522459
Գ. Մալանյան	Ա. Հովակիմյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 3
«05» 09 2018թ. կնքված
ԲԷՅ-ԳՀԱՇՁԲ-18/33 ծածկագրով Պայմանագրի

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Ապարանի ԷՑՇ» ԲԲԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Քուչակ
«Հայբիզնեսբանկ» Աշտարակի մ/ճ
Հ/Հ 11500772041600
ՀՎՀՀ 05200554

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Կապալառուն՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կապալառուն կատարել է հետևյալ Աշխատանքները՝

N	Կատարված Աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«05» 09 2018թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/33 ծածկագրով Պայմանագրի

Պայմանագրի հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անվանումը Կապալառուի անվանումը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը Պայմանագրի համարը
գնման Պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված Աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն